17 հունիսի 2010 թվականի N 757 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 515-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ շինարարության կամ հիմնանորոգման աշխատանքների 300 մլն դրամից ոչ պակաս չափով նախահաշվային արժեք ունեցող օբյեկտների ցանկը հաստատելու մասինե N 515-Ա որոշման հավելվածի աղյուսակի 3-րդ սյունակում «47,689,079.9ե թիվը փոխարինել «48,053,547.4ե թվով և աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ կետով.

«

9.	**<u>ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ</u>**	**364,467.5**
	այդ թվում՝	
9.1.	**Վարչական օբյեկտների հիմնանորոգում**	**364,467.5**
	այդ թվում՝	
	ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճի վերանորոգում	**364,467.5**

>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հունիսի
Ե ր և ա ն

10_0757